

Հիմնայատակ արած են բերդի բեկորներէն մէկ մաս: Արտաքին դռան մօտ՝ ներքին բերդն բարձրանալու ճանապարհին երկու քովերը քարերու մէջ պեղուած երկու մթերանոց կան, որք քառակուսի դէպի յատակ տակաւ առ տակաւ ընդարձակուած են, այնպէս որ չորս քառակուսի մեթր բերանը՝ նա և ութ մեթր խորութիւնը, որ տակաւ առ տակաւ քանի խորը կիջնայ, կը լայննայ, այնպէս որ յատակին լայնութիւնն ևս ութ մեթր կը կարծուի:

Յատակի խորութիւնը և լայնութիւնը ճշտիւ իմանալու համար արգելք եղած են զարերէ ի վեր մէջը թափուած քարինք, կը կարծուի որ այս մթերանոցներն ներքին ուղիով իրարու հետ և ներքին բերդի հետ հաղորդակցութիւն ունեցած լինին, նաև զբաի հետ: Այս մթերանոցներու նեղ բերաններու երկայնութեան և լայնութեան մէջ տեղերն կոփուած են, կերևի խաչաձև երկաթ կը զնէին բերնին, որոց ծայրերն նոյն կոփածոյին վերան կը հաստատուէր և ապա կը գոցուէր բերանն:

Այս մթերանոցներու աջ ու ձախ կերևին աւերակներու հետքեր, որոց որմերն մէկ մեթր բարձրութիւն ունին: Այս մթերանոցներու միջէն արևմտեան հարաւ, ապա հարաւ 30 մեթր դէպի վեր բարձրանալով ներքին բերդին դռան կը հասնինք, որ դէպի արեւմուտք բացուած է:

Ներքին պարիսպն ևս քարաղերինս գաղաթան վերայ հիւսիսային կողմէն և պատած է, դեռ մեծ մասը սրբատաշ քարերով կանգուն մնացած է, նոյնպէս դռան մօտ զանուած չորս հինգ սանդուխներն զորս զանձի խուղարկուք տապալած ու պեղած էին յատակը դեռ